ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 89

«26» 10 2022 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ՝ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի «ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԵՎ ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՈԼՈՐՏԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ՏԵՂԱԿԱԼԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՀԱՐՑԱՇԱՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Ն 47 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի՝ 2022 թվականի հուլիսի 01-ին ուժի մեջ մտնելու հանգամանքը, «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար անցկացվող բաց մրցույթների կազմակերպման գործընթացը հստակեցնելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով ու 38.1-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ 2020 թվականի մայիսի 23-ի «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող՝

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի թեկնածությունների ցուցակների համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթների կազմակերպման կարգը սահմանելու, հարցաշարը հաստատելու մասին» N 47 հրամանի 2-րդ հավելվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին և Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
2022 թվականի հոկտեմբերի 26-ի
թիվ «89» հրամանի

«Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
2020 թվականի մայիսի 23-ի
թիվ «47» հրամանի

Ծանոթություն

Սույն հարցաշարում ընդգրկված հարցերի լիարժեք պատասխանները պետք է ներառեն դրանց օրենսդրական կարգավորումները, դրանց վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Սահմանադրական դատարանի, Վճռաբեկ դատարանի, ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումներով և ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով սահմանված կանոններն ու դիրքորոշումները:

Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

«ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը

1) Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի հիմունքները.
2) Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները.
3) Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման սահմանադրական հիմքերը,
4) Համաչափության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները.
5) ՀՀ նախագահի սահմանադրաիրավական կարգավիճակը.
6) ՀՀ Ազգային ժողովի սահմանադրաիրավական կարգավիճակը.

7) ՀՀ Կառավարության սահմանադրաիրավական կարգավիճակը.

8) ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակը.

9) ՀՀ դատական համակարգը.

10) ՀՀ Սահմանադրական դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակը.

11) ՀՀ դատախազության և քննչական մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակը.

<u>Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը</u>

12) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների իրավաբանական բնույթը և նշանակությունը ՀՀ իրավական համակարգում.

13) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ. գործերի քննությունը ողջամիտ ժամկետում.

14) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները սեփականության պաշտպանության վերաբերյալ.

<u>«Դատախազության մասին» ՀՀ օրենքը</u>

15) Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեության սկզբունքները.

16) Հայաստանի Հանրապետության դատախազության համակարգը.

17) ՀՀ գլխավոր դատախազը.

18) Քրեական հետապնդում հարուցելը.

19) Հսկողությունը մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ.

20) Մեղադրանքի պաշտպանությունը դատարանում.

21) Դատարանների վճիռների, դատավճիռների և որոշումների բողոքարկումը.

22) Պետական շահերի պաշտպանությունը.

23) Դատախազական ակտերը.

24) Հայաստանի Հանրապետության դատախազությունում ծառայողական ենթակայությունը և դասային աստիճանները.

25) Դատախազի իրավունքներն ու պարտականությունները.

26) Դատախազի խրախուսումն ու կարգապահական պատասխանատվությունը.

<u>Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը</u>

27) ՀՀ քրեական օրենսդրության սկզբունքները.

28) Քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում և տարածության մեջ.

29) Հանցանքի հասկացությունը և հատկանիշները.

30) Հանցանքի տեսակները.

31) Հանցանքի օբյեկտի ընդհանուր բնութագիրը.

32) Հանցանքի օբյեկտիվ կողմի ընդհանուր բնութագիրը.

33) Հանցանքի սուբյեկտի ընդհանուր բնութագիրը.

34) Հանցանքի սուբյեկտիվ կողմի ընդհանուր բնութագիրը.

35) Քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու հիմքերը.

36) Բռնագանձման քրեաիրավական բնութագիրը.

37) Մարդու սաղմի, պտղի, մարդու կամ դիակի բջիջների, հյուսվածքների, օրգանների կամ կենսաբանական նյութերի կամ հեղուկների ապօրինի շրջանառության քրեաիրավական բնութագիրը.

38) Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման քրեաիրավական բնութագիրը.

39) Երեխայի կամ անօգնական վիճակում գտնվողի թրաֆիքինգի կամ շահագործման քրեաիրավական բնութագիրը.

40) Ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրականացումը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը կամ հանրաքվեին մասնակցող անձանց իրավունքների կամ պարտականությունների իրականացումը խոչընդոտելու քրեաիրավական բնութագիրը.

41) Ընտրակաշառք ստանալու քրեաիրավական բնութագիրը.

42) Ընտրակաշառք տալու քրեաիրավական բնութագիրը.

43) Ընտրակաշառքի միջնորդության քրեաիրավական բնութագիրը.

44) Ավազակության քրեաիրավական բնութագիրը.

45) Կողոպուտի քրեաիրավական բնութագիրը.

46) Գողության քրեաիրավական բնութագիրը.

47) Խարդախության քրեաիրավական բնութագիրը.

48) Վստահված գույքը հափշտակելու քրեաիրավական բնութագիրը.

49) Համակարգչային հափշտակության քրեաիրավական բնութագիրը.

50) Շորթման քրեաիրավական բնութագիրը.

51) Իրացնելու նպատակով կեղծ արժույթ, արտարժույթ, արժեթղթեր, վճարահաշվարկային այլ փաստաթղթեր կամ վճարային գործիքներ պատրաստելու, պահելու, տեղափոխելու, առաքելու, ձեռք բերելու կամ դրանք իրացնելու քրեաիրավական բնութագիրը.

52) Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության մարզիկի, մրցավարի, թիմի ղեկավարի, մարզչի, արհեստավարժ մարզամրցման այլ մասնակցի կամ դրա կազմակերպչի, հանդիսադիր առևտրային մրցույթի մասնակցի կամ դրա կազմակերպչի կամ մրցանակաբաշխային հանձնաժողովի անդամի կողմից կաշառք ստանալու քրեաիրավական բնութագիրը.

53) Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության մարզիկին, մրցավարին, թիմի ղեկավարին, մարզչին, արհեստավարժ մարզամրցման այլ մասնակցի կամ դրա կազմակերպչին, հանդիսադիր առևտրային մրցույթի մասնակցին կամ դրա կազմակերպչին կամ մրցանակաբաշխային հանձնաժողովի անդամին կաշառք տալու քրեաիրավական բնութագիրը.

54) Ծառայողական կամ մասնագիտական պարտականությունները կատարելու համար ապօրինի վարձատրություն ստանալու կամ պահանջելու քրեաիրավական բնութագիրը.

55) Ֆինանսական բուրգ ստեղծելու, կազմակերպելու կամ ղեկավարելու քրեաիրավական բնութագիրը.

56) Հակամրցակցային գործունեության քրեաիրավական բնութագիրը.

57) Կանխիկ դրամական միջոցների և (կամ) վճարային գործիքների մաքսանենգության քրեաիրավական բնութագիրը.

58) Փողերի լվացման քրեաիրավական բնութագիրը.

59) Կավատության քրեաիրավական բնութագիրը.

60) Պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու քրեաիրավական բնութագիրը.

61) Ահաբեկչության քրեաիրավական բնութագիրը.

62) Ահաբեկչական գործունեությունը ֆինանսավորելու քրեաիրավական բնութագիրը.

63) Հանցավոր կազմակերպություն ստեղծելու կամ ղեկավարելու քրեաիրավական բնութագիրը.

64) Հանցավոր կազմակերպությանը մասնակցելու քրեաիրավական բնութագիրը.

65) Օրենքով չնախատեսված զինված միավորում ստեղծելու կամ ղեկավարելու քրեաիրավական բնութագիրը.

66) Օրենքով չնախատեսված զինված միավորմանը մասնակցելու քրեաիրավական բնութագիրը.

67) Քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալու կամ ստանալու կամ պահպանելու քրեաիրավական բնութագիրը.

68) Քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելու կամ ղեկավարելու քրեաիրավական բնութագիրը.

69) Քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու կամ ներգրավելու քրեաիրավական բնութագիրը.

70) Քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելու քրեաիրավական բնութագիրը.

71) Ռադիոակտիվ կամ միջուկային նյութերի կամ սարքերի ապօրինի շրջանառության, ինչպես նաև դրանք ոչնչացնելու կամ վնասելու քրեաիրավական բնութագիրը.

72) Հրազենի, դրա հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի և այլ նյութերի, սարքերի, առարկաների ապօրինի շրջանառության քրեաիրավական բնութագիրը.

73) Ռազմական նշանակության արտադրանքի, տեխնիկայի, հրազենի կամ այլ նյութերի, սարքերի, առարկաների, ապրանքների մաքսանենգության քրեաիրավական բնութագիրը.

74) Իրացնելու նպատակով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) կամ դրանց ածանցյալների ապօրինի շրջանառության կամ դրանք ապօրինի իրացնելու քրեաիրավական բնութագիրը.

75) Թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, դրանց պատրաստուկներ կամ դրանց համարժեք նյութեր (անալոգ) պատրաստելու նպատակով պրեկուրսորների ապօրինի շրջանառության, իրացնելու նպատակով պրեկուրսորների ապօրինի շրջանառության կամ դրանք ապօրինի իրացնելու քրեաիրավական բնութագիրը.

76) Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների, դրանց համարժեք նյութերի (անալոգի) կամ դրանց ածանցյալների կամ դրանց պրեկուրսորների մաքսանենգության քրեաիրավական բնութագիրը.

77) Կաշառք ստանալու քրեաիրավական բնութագիրը.

78) Կաշառք տալու քրեաիրավական բնութագիրը.

79) Կաշառքի միջնորդության քրեաիրավական բնութագիրը.

80) Պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու քրեաիրավական բնութագիրը.

81) Պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու նպատակով ապօրինի վարձատրություն տալու քրեաիրավական բնութագիրը.

82) Կաշառք ստանալու, կաշառքի միջնորդության կամ իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով օգտագործելու պատրվակով գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն ստանալու քրեաիրավական բնութագիրը.

83) Պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելու կամ լիազորություններն անցնելու քրեաիրավական բնութագիրը.

84) Պաշտոնատար անձի կողմից ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելու քրեաիրավական բնութագիրը.

85) Ապօրինի հարստանալու քրեաիրավական բնութագիրը.

86) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալներ ներկայացնելու, հայտարարագրման ենթակա տվյալները թաքցնելու կամ հայտարարագիր չներկայացնելու քրեաիրավական բնութագիրը.

87) Պաշտոնական կեղծիքի քրեաիրավական բնութագիրը.

88) Ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելու քրեաիրավական բնութագիրը.

89) Արդարադատության իրականացմանը կամ գործի քննությանը միջամտելու քրեաիրավական բնութագիրը.

90) «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա իրականացվող ուսումնասիրության ընթացքում կեղծ հայտարարագիր ներկայացնելու քրեաիրավական բնութագիրը.

91) Իշխանազանցության կամ իշխանությունը չարաշահելու քրեաիրավական բնութագիրը.

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը

92) Քրեական դատավարության օրենսգրքում օգտագործվող հիմնական հասկացությունները.

93) Քրեական հետապնդում իրականացնելու ձևերը և քրեական հետապնդումը բացառող հանգամանքները.

94) Ապացույցների հասկացությունը և տեսակները.

95) Ապացույցների թույլատրելիությունը և դրանց օգտագործման սահմանափակումները.

96) Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքները՝ որպես ապացույց.

97) Ապացուցման ենթակա փաստական հանգամանքները. որոշակի ապացույցներով հաստատվող հանգամանքները.

98) Գույքային հայցը քրեական վարույթում.

99) Քրեական վարույթ նախաձեռնելու հիմքերը և կարգը.

100) Հանրային քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու հիմքերը.

101) Խափանման միջոցների կիրառման դատական երաշխիքները.

102) Ապացուցողական գործողությունների կատարման դատական երաշխիքները.

103) Սեփականության իրավունքի սահմանափակման դատական երաշխիքները.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը

104) Քաղաքացիական իրավունքի հասկացությունը և խնդիրները.

105) Քաղաքացիական իրավունքի սկզբունքների հասկացությունը, նշանակությունը և դասակարգումը.

106) Քաղաքացիական իրավահարաբերությունների ծագման հիմքերը.

107) Իրավաբանական անձի հասկացությունը և հատկանիշները.

108) Իրավաբանական անձանց տեսակները.

109) Պետության, համայնքների և մարզերի իրավունակությունն ու քաղաքացիական իրավահարաբերություններին մասնակցության ձևերը.

110) Քաղաքացիական իրավունքի օբյեկտների հասկացությունը և տեսակները ըստ ՀՀ քաղաքացիական օրենսդրության.

111) Իրերի հասկացությունը, դասակարգումը և դրա իրավական նշանակությունը.

112) Դրամական միջոցները որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտ.

113) Արժեթղթերի հասկացությունը, տեսակները ու դրանց ընդհանուր բնութագիրը.

114) Առևտրային գաղտնիքի իրավական պահպանությունը.

115) Սեփականության իրավունքի հասկացությունը և բովանդակությունը.

116) Սեփականության իրավունքի ձեռք բերման հիմքերը.

117) Պտուղների, եկամուտների և տիրազուրկ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռք բերման կարգը: Պայմանագրով գույք ձեռք բերելը որպես սեփականության իրավունքի առաջացման հիմք.

118)Ինքնակամ կառույցի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռք բերման կարգը.

119)Սեփականության իրավունքի դադարելը սեփականատիրոջ կամքով, սեփականության իրավունքի դադարելը սեփականատիրոջ կամքին հակառակ կամ նրա կամքից անկախ.

120) Քաղաքացիների սեփականության իրավունքի առանձնահատկությունները.

121) Պետական սեփականության իրավունքի առանձնահատկությունները.

122) Իրավաբանական անձանց սեփականության իրավունքի առանձնահատկությունները.

123) Ընդհանուր սեփականության իրավունքի հասկացությունը և առաջացման հիմքերը.

124) Ընդհանուր բաժնային սեփականության իրավունք.

125) Ընդհանուր համատեղ սեփականության իրավունք.

126) Սեփականության իրավունքի պաշտպանության քաղաքացիաիրավական եղանակները.

127) Ապօրինի շինարարության և ինքնակամ կառույցի հասկացությունը, կարգավիճակը.

128) Գործարքի հասկացությունը, գործարքի տեսակները և ձևը.

129) Գործարքի վավերության պայմանները.

130) Գործարքի անվավերության հասկացությունը: Անվավեր գործարքի տեսակներն ու հետևանքները.

131)Հայցային վաղեմություն.

132) Պարտավորության հասկացությունը, տեսակները և տարրերը.

133) Պայմանագիրը փոփոխելը և լուծելը.

134) Պարտավորությունների կատարման հասկացությունը, կատարումն ապահովելու միջոցները:

135) Պարտավորությունների դադարումը.

136) Քաղաքացիաիրավական պատասխանատվության տեսակները և հիմքերը.

137) Վնաս պատճառելու համար պատասխանատվության հիմքերը.

138) Անհիմն հարստացման հետևանքով ծագող պարտավորության հասկացությունը և տեսակները.

139) Ժառանգությունն ըստ օրենքի և ըստ կտակի.

<u>Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը</u>

140) Քաղաքացիական դատավարության հասկացությունը և խնդիրները.

141) Քաղաքացիական դատավարության փուլերի ընդհանուր բնութագիրը.

142) Քաղաքացիական դատավարության սկզբունքների հասկացությունը, տեսակները և նշանակությունը.

143) Կողմերի հասկացությունը, նրանց դատավարական իրավունքները և պարտականությունները քաղաքացիական դատավարությունում.

144) Երրորդ անձանց հասկացությունը: Վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող և չներկայացնող երրորդ անձինք.

145) Քաղաքացիական դատավարությանը դատախազի մասնակցության հիմքերը.

146) Դատախազի կարգավիճակը քաղաքացիական դատավարությունում.

147) Հայցային վարույթի հասկացությունը և էությունը.

148) Հայցի հասկացությունը: Հայցի տարրերը և հայցի հարուցման իրավունքը.

149) Հայցի ապահովումը, նախնական ապահովումը և հակընդդեմ ապահովումը.

150) Հաշտության համաձայնությունը քաղաքացիական դատավարությունում.

151) Ապացույցների ապահովումը քաղաքացիական դատավարությունում.

152) Ապացույցների հասկացությունը և տեսակները քաղաքացիական դատավարությունում.

153) Ապացուցման բեռը քաղաքացիական դատավարությունում.

154) Ապացույցներ պահանջելու դատավարական կարգը քաղաքացիական դատավարությունում.

155) Ապացույցների վերաբերելիությունը և թույլատրելիությունը քաղաքացիական դատավարությունում.

156) Ապացույցների հետազոտումը և գնահատումը քաղաքացիական դատավարությունում.

157) Նախադատելի փաստերը քաղաքացիական դատավարությունում.

158) Իրեղեն ապացույցները քաղաքացիական դատավարությունում.

159) Դատական փորձաքննության հասկացությունը, տեսակները և նշանակման կարգը քաղաքացիական դատավարությունում:

160) Գործի քննության կարգն առաջին ատյանի դատարանում քաղաքացիական դատավարության շրջանակներում.

161) Օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունների տրամադրման վարույթը.

162) Դատական սանկցիաները քաղաքացիական դատավարությունում.

163) Գործի քննության հետաձգումը քաղաքացիական դատավարությունում.

164) Գործի վարույթի կասեցումը քաղաքացիական դատավարությունում.

165) Դատական ակտը նոր երևան եկած հանգամանքներով վերանայելու վարույթը քաղաքացիական դատավարությունում.

166) Նոր հանգամանքներով վճիռների և որոշումների վերանայման վարույթը քաղաքացիական դատավարությունում.

167) Վերաքննիչ վարույթի ընդհանուր բնութագիրը և վերաքննիչ բողոքարկման իրավունքը.

168) Վերաքննիչ բողոք բերելու կարգը քաղաքացիական դատավարությունում.

169) Վճռաբեկ վարույթը, վճռաբեկ բողոքարկման իրավունքը.

170) Վճռաբեկ բողոք բերելու կարգը քաղաքացիական դատավարությունում.

171) Վճռաբեկ բողոք բերելու հիմքերը քաղաքացիական դատավարությունում.

172) Դատախազի կողմից դատական ակտերի բողոքարկումը վերաքննության և վճռաբեկության կարգով քաղաքացիական դատավարությունում.

173) Օտարերկրյա դատարանների և արբիտրաժների վճիռների ճանաչումը և կատարումը քաղաքացիական դատավարությունում.

<u>Պետական շահերի պաշտպանությունը</u>

174) Քաղաքացիական և վարչական դատավարությունում դատախազի կարգավիճակը և մասնակցության հիմքերը.

175) Պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու նպատակով կամ հայց հարուցելիս դատախազի իրավունքները.

176) Դատախազի կողմից պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու հիմքերը և հայցի տեսակները.

177) Կատարողական վարույթի հարուցման հիմքերը և կարգը.

178) Կատարողական վարույթի հարուցման ժամկետները.

179) Հարկադիր կատարողի որոշումները և դրանց բողոքարկումը.

<u>«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքը</u>

180) «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները.

181) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու նպատակով ուսումնասիրություն սկսելը և դրա հիմքերը.

182) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու նպատակով ուսումնասիրության սահմաններն ու իրականացման ժամկետները.

183) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու նպատակով ուսումնասիրության գաղտնիությունը և ուսումնասիրության ընթացքում օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունների հավաքումը.

184) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու նպատակով ուսումնասիրության ընթացքում օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունների հավաքման նկատմամբ դատական վերահսկողության կառուցակարգը.

185) Քրեական վարույթին զուգահեռ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու նպատակով ուսումնասիրություն իրականացնելու առանձնահատկությունները.

186) Իրավասու մարմնի լիազորություններն ուսումնասիրություն իրականացնելիս և ուսումնասիրության արդյունքների նախնական ամփոփումը.

187) Գույքի նկատմամբ հայցի նախնական ապահովման միջոցների կիրառումը և ապացույցների ապահովումը.

188) Շահագրգիռ անձանց ծանուցումը.

189) Ուսումնասիրության արդյունքների վերջնական ամփոփումը և եզրակացության կազմումը.

190) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցը.

191) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի քննությունը դատարանում.

192) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում ապացուցման առանձնահատկությունները.

193) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը գույքը ձեռք բերողից.

194) Գույքը բարեխիղճ ձեռք բերողը և նրա գույքի բռնագանձման անթույլատրելիության վերաբերյալ կարգավորումները.

195) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի ավարտումը հաշտության համաձայնությամբ, հաշտության համաձայնության պայմանների խախտմամբ պետությանը պատճառված վնասը և դրա հատուցումը.

196) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ վճռի կայացումը.

197) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը.

198) Պետության տիրապետությանը հանձնված գույքի կառավարումը և օտարումը.

199) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարցերով միջազգային համագործակցությունը.

200) Առանց մեղադրական դատավճռի ակտիվների բռնագանձման ինստիտուտի վերաբերյալ ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունները և միջազգային հիմնական իրավական ակտերը.»: